ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 51-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքում 2020թ. ընթացքում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի իրականացման մասին:
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
3. Դիլիջան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին:
Զեկ.Ա. Սանթրոսյան
4. Գույքի տնօրինման մասին:
Զեկ.Ա. Սանթրոսյան
5. Դիլիջան համայնքի 2020թ.բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
Զեկ.Ա. Սանթրոսյան
6. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 474.5քմ մակերեսով հողամասը, Գյուղատնտեսական նշանակության հողերից 2016.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի և բնակավայրերի հողերից 766.6քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
7. Գույքի տնօրինման մասին:
Զեկ.Ա.Սանթրոսյան

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 52-Ն

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքին վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ծրագրով գումար է հատկացվել Հաղարծին բ նակավայրում
արտակարգ իրավիճակների՝ սողանքի հետևանքով վթարված խմելու ջրի ակունքի վերականգնման և ջրագծի կառուցման աշխատ անքների համար: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-
րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի 2020թ. բյուջեի եկամուտները /Վարձատրվող հասարակական աշխատանքներ/ ավելացնել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ.

2. Դիլիջան համայնքի 2020թ. բյուջեով նախատեսված ծախսերը «10-07-01 Սոցիալական հատուկ արտոնություններ» ավելացնել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից հոդված 4111(Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ)-1230000(մեկ միլիոն երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ. 4264(Տրանսպորտային նյութեր)- 270000 (երկու հարյուր յոթանասուն հազար)ՀՀ դրամ:

3. Դիլիջան համայնքի ֆինանսական մասնակցությունն ապահովելու նպատակով Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02, «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից հատկացնել 1500000(մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ «10-07-01 Սոցիալական հատուկ արտոնություններ» հոդված 4269(Հատուկ նպատակային այլ նյութեր):

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27·ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 53-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջև համաձայնեցված «18 բազմաբնակավայր համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակում» ծրագրի շրջանակներում մշակված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույց»-ով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Դիլիջան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 54--Ն

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դիլիջան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Հավելված
Դիլիջան համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 27- ի
N 54-Ն որոշման

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են Դիլիջան համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը:

2. Համայնքի կամավոր խնդիրները ուղղակիորեն պայմանավորված չեն համայնքային կյանքի բնականոն ընթացքի հետ: Դրանք կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների չափը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 2%-ը:

4. Այն դեպքում, երբ կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի կողմից սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

5. Համայնքի կամավոր խնդիրներ են սահմանվում՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցությունը.

2) բարձր առաջադիմություն ունեցող, անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը.

3) ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը

4) նորածին երեխաների ընտանիքներին աջակցությունը:

6. Որպես համայնքի կամավոր այլ խնդիր ավագանու կողմից սահմանելու համար առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանելու առաջարկությունը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության

հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի սեփական լիազորություններն են՝

1) ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխան, սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով.

2) մշտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան, որոշում է կայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ.

3) սահմանված կարգով ընթացք է տալիս սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված նախաձեռնություններին:

10. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով սոցիալական աջակցությունը տրամադրվում է մինչև 50 000 (հիսուն հազար) դրամի չափով:

11. Բացառիկ դեպքերում՝ արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ պայմանավորված, հրատապ աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում, սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա՝ մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, կարող է տրամադրվել մինչև 200 000 (երկու հարյուր հազար) դրամի չափով աջակցություն:

12. Դրամական աջակցություն ցուցաբերելու դեպքում գումարը տրամադրվում է անկանխիկ՝ համապատասխան բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

13. Սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել նաև ոչ դրամական ձևով:

14. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձը (ընտանիքը) սոցիալական աջակցությունից կարող է օգտվել մեկ անգամ:

15. Ուսման վարձի մասնակի փոխհատուցման ձևով սոցիալական աջակցություն տրամադրվում է պետական (նաև՝ պետության կողմից հավատարմագրված ոչ պետական) բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող, բարձր առաջադիմություն ունեցող, ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխանող, ուսանողներին:

16. Սոցիալական աջակցությունից չեն կարող օգտվել համայնքի ղեկավարը, ավագանու անդամը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը, համայնքային ենթակայության կազմակերպության ղեկավար պաշտոններում աշխատողները, ինչպես նաև վերջիններիս հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձիք (ծնող, ամուսին, զավակ, թոռ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն (բացառությամբ սույն կարգի 11-րդ կետով սահմանված դեպքերի), ինչպես նաև Դիլիջան համայնքի բնակիչ չհանդիսացող քաղաքացիները,:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 55-Ա

ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժինը՝ հայտնելով, որ Ռուբեն Հարությունյանի կողմից Դիլիջան համայնքի «Մեծ Թալա» կոչվող տարածքից գողացվել է 2000թ. սեպտեմբերից Դիլիջան համայնքի հաշվեկշռում ընդգրկված, 581410 մնացորդային արժեքով «Մեծ Թալայի հակասողանքային կոմունիկացիա»-ի խողովակաշարից կտրտված ընդհանուր 25 հատ տարբեր հաստության և երկարության խողովակներ: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ կոմունիկացիան կառուցվել է 1960-ական թվականներին և 1980-ական թվականներից չի գործել նպատակային նշանակությամբ: Հաշվի առնելով, որ Դիլիջան քաղաքի տվյալ հատվածում արդեն գործում են հակասողանքային թունելները, ուստի անհրաժեշտություն չկա վերականգնել հակասողանքային կոմունիկացիան: Ռուբեն Հարությունյանի կողմից գողացված խողովակները ամբողջությամբ վերադարձվել է Դիլիջանի համայնապետարանին: Համայնքի ղեկավարի կողմից Ռուբեն Հարությունյանից բողոք և պահանջ ներկայացնելու, ինչպես նաև մետաղական խողովակների հետագա տնօրինման հարցը ներկայացվում է համայնքի ավագանու քննարկմանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի կողմից ներկայացված Ռուբեն Հարությունյանի կողմից Դիլիջան համայնքի «Մեծ Թալա» կոչվող տարածքից «Մեծ Թալայի հակասողանքային կոմունիկացիա»-ի խողովակաշարից կտրտված ընդհանուր 25 հատ տարբեր հաստության և երկարության խողովակների գողության փաստով Դիլիջանի համայնքապետարանը Ռուբեն Հարությունյանից բողոք և պահանջ չունի, իսկ 25 հատ մետաղական խողովակները թողնել համայնքի հաշվեկշռում՝ այլ նպատակներով օգտագործելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 56-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել 1941-1945թ. Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 75-րդ տարելիցի կապակցությամբ պատերազմի մասնակից վետերաններին տալ դրամական օգնություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերանին դրամական օգնություն տալու նպատակով Դիլիջանի համայնքի 2020թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 175000(Մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4729/ :

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 57-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 474.5ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 2016.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 766.6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 474.5քմ մակերեսով հողամասը, գյուղատնտեսական նշանակության հողերից 2016.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի և բնակավայրերի հողերից 766.6քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 474.5քմ մակերեսով հողամասը, գյուղատնտեսական նշանակության հողերից 2016.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի և բնակավայրերի հողերից 766.6քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու
2020թ. ապրիլի 27--ի թիվ 57--Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը /հողատեսքը/	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 11/ՔՀ-20/	ք.Դիլիջան, Մյասնիկյան 16/1	11-003-0045-0055	474.5	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	1,186,250	չկան
2	Լոտ 7/ՔՀ-20/ կրկնաճուրդ	ք.Դիլիջան, Արցախի 1-ին նրբ. 32/1	11-003-0086-0038	206.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	515,000	չկան
3	Լոտ 44/ՔՀ-14/ կրկնաճուրդ	ք.Դիլիջան, Տ.Պետրոսյան 4-րդ փկղ. 10	11-003-0040-0296	560.6	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	1,401,500	չկան
4	Լոտ 1/ԳՀ-20/	գ.Հաղարծին	11-042-0148-0033	1,282.0	Գյուղատնտեսական նշանակության հող	խոտհարք	խոտհարք	128,200	չկան
5		գ.Հաղարծին	11-042-0143-007	209.0	Գյուղատնտեսական նշանակության հող	արոտավայր	արոտավայր	20,900	չկան
6		գ.Հաղարծին	11-042-0156-003	525.0	Գյուղատնտեսական նշանակության հող	արոտավայր	արոտավայր	52,500	չկան

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ *Ս.Եգանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 58-Ա

ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժինը՝ հայտնելով, որ Գերասիմ Աղաջանյանի կողմից Հովսեփյան փողոցից գողացվել է Դիլիջանի համայնքապետարանին պատկանող ջրահեռացման համակարգի դիտահորի մետաղական 4 հատ ծածկոց: Համայնքի ղեկավարի կողմից Գերասիմ Աղաջանյանից բողոք և պահանջ ներկայացնելու հարցը ներկայացվում է համայնքի ավագանու քննարկմանը:

Հաշվի առնելով, որ գողացված նյութական արժեքները չեն հայտնաբերվել, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի կողմից ներկայացված Դիլիջանի համայնքապետարանին պատկանող ջրահեռացման համակարգի դիտահորի մետաղական 4 հատ ծածկոցների գողության փաստով Դիլիջանի համայնքապետարանը Գերասիմ Աղաջանյանից բողոք չունի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ